Գիտություն

ՆՈՅԵՄԲԵՐ
№ 11
(324)
2018 թ.

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի թերթ ● Հրատարակվում է 1993 թ. փետրվարից

ՀՀ ԳԱԱ նախագահ Ռադիկ Մարտիրոսյանը հյուրընկալեց Հայաստանում Ռուսաստանի նորանշանակ արտակարգ և լիազոր դեսպան Սերգեյ Կոպիրկինին

Սույն թվականի հոկտեմբերի 31-ին ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը ՀՀ ԳԱԱ նախագահությունում հյուրընկալեց Հայաստանում Ռուսաստանի նորանշանակ արտակարգ և լիազոր դեսպան Սերգեյ Կոպիրկինին: ՀՀ ԳԱԱ նախագահը շնորհավորեց դեսպանին այդ պատասխանատու պաշտոնում նշանակվելու կապակցությամբ: Նա նշեց, որ հայ-ռուսական գիտական կապերը միշտ ամուր են եղել:

Կողմերը քննարկեցին Հայաստանի և Ռուսաստանի գիտությունների ակադեմիաների միջև կնքված պայմանագրով նախատեսված համագործակցության ընթացքը, համատեղ իրականացվող ծրագրերը, նորանոր ծրագրերի իրականացման հնարավորությունները, երիտասարդ կադրերի փոխանակման հարցերը:

ՀՀ ԳԱԱ նախագահ Ռադիկ Մարտիրոսյանը դեսպան Սերգեյ Կոպիրկինին նվիրեց օրերս ՀՀ ԳԱԱ-ում տեղի ունեցած ԱՊՀ գիտնականների II ֆորումի և ՀՀ ԳԱԱ 75-ամյա հոբելյանին նվիրված միջոցառումների նյութերը:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական ծառայություն

Սևանա լճի արդի խնդիրներին նվիրված կլոր սեղան ՀՀ ԳԱԱ-ում

ՀՀ ԳԱԱ-ում տեղի ունեցավ կլոր սեղան՝ նվիրված Սևանա լճի արդի խնդիրներին:

Կլոր սեղանին մասնակցում էին ՀՀ կառավարության ներկայացուցիչներ, ՀՀ ԳԱԱ-ին առընթեր Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողովի անդամներ, ՀՀ ԳԱԱ և այլ գիտական և հասարակական կազմակերպությունների ղեկավարներ, գիտական հասարակայնության ներկայացուցիչներ:

Մասնակիցներին ողջունեց ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը: «Մեր հանրության ուշադրության կենտրոնում է Սևանա լիճն իր հատուկ աշխարհագրական, բնապահպանական և հասարակական նշանակության առումով: Երբեմն Սևանա լճի վերաբերյալ ընդունվում են որոշումներ, երաշխավորություններ, ➢4

Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիան դարձավ Միջազգային գիտական կազմակերպությունների դաշինքի համահիմնադիր

Չինաստանի գիտությունների ակադեմիայի նախաձեռնությամբ ստեղծված Միջազգային գիտական կազմակերպությունների դաշինքի (ՄԳԿԴ-ANSO) համահիմնադիր դարձավ Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիան:

ՄԳԿԴ-ն ստեղծվեց «Մեկ գոտի և մեկ ճանապարհ» նախաձեռնության շրջանակներում Չինաստանի գիտությունների ակադեմիայի նախաձեռնությամբ: Սույն թվականի նոյեմբերի 3-5-ը Չինաստանի մայրաքաղաք Պեկինում տեղի ունեցավ ՄԳԿԴ-ի ստեղծմանը նվիրված առաջին գլխավոր ասամբլեան, որի ընթացքում Դաշինքի համահիմնադիրները ստորագրեցին ՄԳԿԴ-ի ստեղծման համաձայնագիրը: Ասամբլեայի ընթացքում ընտրվեցին ՄԳԿԴ-ի կառավարող և գործադիր մարմինները, քարտուղարությունը, հաստատվեց Դաշինքի կանոնադրությունը: ՄԳԿԴ-ի նախագահ դարձավ Չինաստանի գիտությունների ակադեմիայի նախագահ Բայ Չունլին, փոխնախագահներ՝ Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի նախագահ Ալեքսանդր Սերգեևը և Պակիստանի գիտությունների ակադեմիայի նախագահ Քասիմ Ջանը:

Դաշինքի համահիմնադիրները 36 կազմակերպություններ են՝ մի շարք երկրների գիտությունների ակադեմիաներ, համալսարաններ, միջազգային գիտական կազմակերպություններ:

ՄԳԿԴ-ն միջազգային, ոչ պետական, եկամուտ չհետապնդող գիտական կազմակերպություն է, որի հիմնական նպատակն է աջակցել գիտության, տեխնոլոգիաների և նորարարությունների զարգացմանը «Մեկ գոտի և մեկ ճանապարհի» տարածաշրջանի երկրներում: ՄԳԿԴ-ն ապահովելու է լայն հնարավորություններ տարածաշրջանային երկրների գիտական կազմակերպությունների կողմից խոշոր և միջին գիտական ծրագրերի նախաձեռնման և իրականացման համար: Այն կդառնա գիտական նորարար նախաձեռնությունների առաջարկման, քննարկման և կյանքի կոչման հարթակ:

ՄԳԿԴ-ի առաջին գլխավոր ասամբլեայի ընթացքում ելույթ ունեցողները բարձր գնահատեցին այս Դաշինքի ստեղծման կարևորությունը և համոզվածություն հայտնեցին, որ այն միջազգային կազմակերպությունների ցանկում կգրավի կարևորագույն տեղ:

ՄԳԿԴ-ն ստեղծվեց 2016թ. Պեկինում տեղի ունեցած Ազգային գիտական կազմակերպությունների առաջին միջազգային գիտական ֆորումում ստորագրված «Չինաստանի և Մետաքսի ճանապարհի տնտեսական գոտու երկրների միջև գիտության և տեխնոլոգիաների համագործակցության նոր էջ. Պեկին հռչակագիր» շրջանակներում:

ՄԳԿԴ-ի առաջին գլխավոր ասամբլեայի շրջանակներում տեղի ունեցավ նաև «Մեկ գոտի և մեկ ճանապարհ» նախաձեռնության գիտական կազմակերպությունների երկրորդ միջազգային ֆորումը, որին Հայաստանի կողմից մասնակցեցին ՀՀ ԳԱԱ ֆիզիկայի և աստղաֆիզիկայի բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ակադեմիկոս Ռադիկ Կոստանյանը և ՀՀ ԳԱԱ Միջազգային կապերի վարչության պետ Գագիկ Էվոյանը: Ֆորումի ընթացքում անցկացվեցին գիտաժողովներ հետևյալ թեմաներով.

* ՄԳԿԴ-Շրջակա միջավայր և «կանաչ» զարգացում
* ՄԳԿԴ-Թվային Մեկ գոտի և մեկ ճանապարհ
* ՄԳԿԴ-Կայուն Մեկ գոտի և մեկ ճանապարհ, անցում «կանաչ» տեխնոլոգիաներին, կառավարում և նորարարություններ,
* ՄԳԿԴ-Գիտություն և կրթություն
* ՄԳԿԴ- Ինֆեկցիոն հիվանդություններ և բժշկություն
* ՄԳԿԴ- Նորարարություններ և զարգացում
* ՄԳԿԴ-Կենսաբազմազանություն և պահպանություն:

Ֆորումի մասնակիցները պատրաստակամություն հայտնեցին իրենց ներդրումը բերել ֆորումի շրջանակներում հայտարարված գիտական ուղղությունների ծավալման և «Մեկ գոտի և մեկ ճանապարհ» նախաձեռնության նպատակների իրականացման համար:

«Մեկ գոտի և մեկ ճանապարհ» նախաձեռնության շրջանակներում ՄԳԿԴ-ի հիմնադրումն արժանացել է Չինաստանի կառավարության հավանությանը:

«Մեկ գոտի և մեկ ճանապարհ» նախաձեռնությունը ստեղծվել է 2013 թ. Չինաստանի Ժողովրդական Հանրապետության նախագահ Սի Ծինփինի որոշմամբ՝ որպես Չինաստանի մասնակցությամբ միջազգային համագործակցության և զարգացման նոր մոդել: Այս նախաձեռնությունը պատմական «Մետաքսի ճանապարհի» զարգացման նոր մոդելն է: Նախաձեռնությունը կոչ է արել մշակել տարածաշրջանային գործընկերության նոր մեխանիզմներ, խթանել ներգրավված երկրներում տնտեսական աճը, ամրապնդել տարբեր քաղաքակրթությունների միջև մշակութային արժեքները և կապերը բոլոր ոլորտներում, ինչպես նաև նպաստել խաղաղությանը և կայուն զարգացմանը:

«Մեկ գոտի և մեկ ճանապարհ» նախաձեռնությունը ներգրավում է աշխարհի զարգացած և զարգացող երկրներ:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական ծառայություն



ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՆ 75 ՏԱՐԵԿԱՆ Է

Հոկտեմբերի 17-ին մեկնարկեցին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի 75-ամյակին նվիրված հոբելյանական միջոցառումները:

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիային շնորհավորեցին Բելառուսի, Մոլդովայի, Ղրղզստանի, Լատվիայի, Լիտվայի, Էստոնիայի, Տաջիկստանի, Սլովենիայի, Չեխիայի, Ռուսաստանի, Վրաստանի, Մեծ Բրիտանիայի, Ուկրաինայի պատվիրակությունների ղեկավարները, Եվրոպական երկրների ակադեմիաների ընկերակցության (ALLEA) փոխնախագահ Գրեհամ Քեյը, ԱՊՀ գործադիր կոմիտեի նախագահ Ագիբայ Սմագուլովը, Եվրոպական ակադեմիայի փոխնախագահ Օլե Պետերսոնը:

«Պատահական չէ, որ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիային շնորհավորելու են եկել գիտնականներ տարբեր երկրներից՝ ԱՊՀ երկրներից, Բալթյան երկրներից, Եվրամիությունից: Դա խոսում է Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի միջազգային ճանաչման մասին:

Ամբողջ աշխարհը գիտի, թե որքան ուժեղ է Հայաստանի գիտությունների ակադեմիան: Եղել է ուժեղ և հիմա էլ ուժեղ է: Այն ակադեմիայի ոչ միայն կառուցվածքի պահպանման լավ օրինակ է, այլև գիտության և մշակույթի էլիտար հանրության պահպանման օրինակ...»,- այսպիսի գնահատական տվեցին ՀՀ ԳԱԱ-ի հյուրերը:

Հոբելյանի օրերին ՀՀ ԳԱԱ-ն ստացավ բազմաթիվ շնորհավորանքներ և ողջույնի ուղերձներ: Ընթերցողների ուշադրությանն ենք ներկայացնում դրանցից մի քանիսը:

ՄՈՍԿՎԱՅԻՑ

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի նախագահ Ռադիկ Մարտիրոսյանին

Մեծարգո՛ Ռադիկ Մարտիրոսի

Սրտանց շնորհավորում ենք Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիային հոբելյանի առթիվ: Հայ գիտությունը, նրա ավանդույթները, դպրոցները, ինքնատիպ ձեռքբերումներն անտարակույս կազմում են համաշխարհային ձեռքբերումների մասը:

Ավելին, գիտական միտքը միշտ էլ եղել է մշակութային և քաղաքական կոնսեսուսի հիմքը, իսկ գիտական գաղափարների պատմությունը՝ բարեկամական առաջընթացի և զարգացման հիմքը: Նման բարեկամության օրինակ է ռուս-հայկական համագործակցությունը գիտության ասպարեզում:

Ռուսաստանի բնական գիտությունների ակադեմիան մշտապես հատուկ նշանակություն է նվիրել բարեկամությանն ու համագործակցությանը հայ գործընկերների հետ: Մեր համատեղ հետազոտությունները, մշակումները, աշխատանքներն ու հայտնագործությունները թույլ են տալիս ընդլայնել համագործակցությունը մեր երկու ժողովուրդների միջև, նոր մակարդակի հասցնել համագործակցությունը տարբեր ոլորտներում:

Ռուսաստանի բնական գիտությունների ակադեմիայի Հայկական գիտական կենտրոնի վերականգնումը էական խթան հանդիսացավ գիտական համագործակցության համար: Այն դրսևորվում է Ռուսաստանի բնական գիտությունների ակադեմիայի հայկական գիտական կենտրոնի, Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի տարբեր բաժանմունքների և ինստիտուտների սերտ համագործակցության ոլորտում:

Մաղթում ենք Ձեզ նոր հաջողություններ գիտության զարգացման գործում:

Հարգանքներով՝ Օ. Լ. ԿՈՒԶՆԵՑՈՎ
Ռուսաստանի բնական գիտությունների ակադեմիայի նախագահ
Լ. Վ. ԻՎԱՆԻՑԿԱՅԱ
Ռուսաստանի բնական գիտությունների ակադեմիայի փոխնախագահ, գլխավոր գիտքարտուղար

■

Մեծարգո՛ Ռադիկ Մարտիրոսի

...Աշխարհի ժողովուրդների հոգևոր միասնության միջազգային ակադեմիան մշտապես զորավիգ է եղել Հայաստանի բլոկադայի ծանր օրերին, ավերիչ երկրաշարժի, Արցախյան պատերազմի օրերին:

Միաժամանակ մենք միշտ սերտորեն համագործակցել ենք հայ գիտական հանրության հետ: Այս դիրքորոշումն այսուհետ նույնպես կմնա մեր գործունեության հիմքում ընդհանրապես, ինչպես Ռուսաստանի Դաշնության գիտությունների ակադեմիայի, այնպես էլ Հայաստանի հետ:

Ք. Գ. Ե. ՏՐԱՊԵՅՆԻԿՈՎ
Աշխարհի ժողովուրդների հոգևոր-ակադեմիայի նախագահ, ՌԴ ԳԱ ակադեմիկոս

■

Մեծարգո՛ Ռադիկ Մարտիրոսի

Շնորհավորում ենք Ձեզ Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի հոբելյանի առթիվ:

Այսօր Ռուսաստանի և Հայաստանի առջև ծառացած են լուրջ խնդիրներ Եվրասիական ինտեգրացման մոդեռնիզացիայի, մրցունակության և կայուն զարգացման գործում, որոնց լուծումները մեր երկրներին թույլ կտան հասնել նոր մակարդակի:

Համոզված ենք, որ Ռուսաստանի գիտությունների ակադեմիան և Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիան ունենալու են կարևորագույն դեր վերը նշված դժվարին խնդիրների իրականացման գործում: Մեր արդյունավետ համագործակցությունը հնարավորություն կտա առաջ ընթանալու մեր ընդհանուր խնդիրների իրականացման ուղղությամբ:

Միանում ենք բոլոր բարի մաղթանքներին: Հաջողություններ և նոր ձեռքբերումներ:

Հարգանքներով՝ Ս. Յու. ԳԼԱԶԵՎ
Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի Եվրասիական տնտեսական ինտեգրացիայի մոդեռնիզացիայի, մրցունակության և կայուն զարգացման գիտական խորհրդի նախագահ, ակադեմիկոս

Ե. Ա. ՆԱՈՒՄՈՎ
Գիտական խորհրդի գիտական քարտուղար, ՌԳԱ ակադեմիկոս

■

Հարգելի՛ Ռադիկ Մարտիրոսի
Թանկագին գործընկերներ և բարեկամներ

Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի ֆիզիկական գիտությունների բաժանմունքը սրտանց շնորհավորում է Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիային փառապանծ 75-ամյա հոբելյանի առթիվ:

Տարիների ընթացքում ՀՀ ԳԱԱ-ն դարձել է երկրի հզոր ինտելեկտուալ կենտրոնը՝ շնորհիվ Ձեր կոլեկտիվի և Հայաստանի ողջ գիտական հանրության ստեղծագործ ջանքերի:

Պատվով հաղթահարելով փորձություններն ու ճգնաժամերը՝ ակադեմիան գիտության զարգացման ճանապարհին ցուցաբերեց ոգու ամրություն, նպատակասլացություն, և այսօր հանրապետության գիտությունների ազգային ակադեմիան տասնյակ գիտահետազոտական ինստիտուտներն են և իրենց գործի նվիրյալ մարդիկ:

ՌԳԱ ֆիզիկական գիտությունների բաժանմունքն իր խորը հարգանքն է հայտնում Ձեզ համաշխարհային գիտության զարգացման գործին բերած ծանրակշիռ ավանդի, երկար տարիների արդյունավետ և շահավետ համագործակցության, պրոֆեսիոնալիզմի և ակադեմիական գիտության ավանդույթներին նվիրվածության համար:

Ձեզ և Ձեր ամբողջ կոլեկտիվին մաղթում ենք հետագա զարգացում, ստեղծագործական հաջողություններ և ծաղկում:

Ի. Ա. ՇՀԵՐԲԱԿՈՎ
ՌԳԱ ֆիզիկական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ՌԳԱ ակադեմիկոս
Ն. Լ. ԻՍՏՈՄԻՆ
ԼԳԱ ֆիզիկական գիտությունների բաժնի պետ, ՌԳԱ ՖԳ բաժանմունքի ՌԳԱ ակադեմիկոս-քարտուղարի տեղակալ

ԿԻԵՎ

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի նախագահ Ռադիկ Մարտիրոսյանին

Մեծարգո՛ Ռադիկ Մարտիրոսի

Սրտանց շնորհակալություն եմ հայտնում Ձեզ՝ Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի 75-ամյակին նվիրված հանդիսություններին մասնակից Ուկրաինայի գիտությունների ակադեմիայի պատվիրակությանը ջերմ և գրկաբաց ընդունելու համար:

Մեծարգո՛ Ռադիկ Մարտիրոսի, սրտանց մաղթում եմ Ձեզ քաջառողջություն, բարեկեցություն և հաջողություններ հանուն ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի և Ուկրաինայի ԳԱԱ համագործակցության խորացման:

Հարգանքներով՝ Ս. Ի. ՊԻՐՈԺԿՈՎ
Ուկրաինայի գիտությունների ազգային ակադեմիայի փոխնախագահ, ակադեմիկոս

■

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի նախագահ Ռադիկ Մարտիրոսյանին

Մեծարգո՛ Ռադիկ Մարտիրոսի

Ռուսաստանի բնական գիտությունների ակադեմիայի Հայկական կենտրոնը շնորհավորում է ՀՀ գիտությունների ազգային ակադեմիային 75-ամյակի կապակցությամբ:

Հայաստանի գիտությունների ակադեմիան ծնվեց պատերազմի ծանր տարիներին: Մեծ գիտնական Իոսիֆ Օրբելու ջանքերով հայ գիտությունը դարձավ ինստիտուցիոնալը, որը հզոր խթան հանդիսացավ գիտության տարբեր ճյուղերի զարգացման, բազմաթիվ դպրոցների կայացման, իրենց գործի ճշմարիտ հանճարների ծննդի համար:

Վերջին տարիներին Ռուսաստանի բնական գիտությունների ակադեմիայի Հայկական կենտրոնի համագործակցությունը ՀՀ ԳԱԱ-ի հետ ցույց տվեց, որ ժամանակակից գիտությանը ներկայացվող պահանջները կարելի է լուծել անգամ առանց շտապելու, գիտական նվիրյալների փոքր ուժերով: Հուսով ենք, որ աշխարհում կատարվող վերջին իրադարձությունները մեր համագործակցությունը կբարձրացնեն նոր աստիճանի:

Հարգանքներով՝ Վ. Ս. ՊԵՏՐՈՍՅԱՆ
Ռուսաստանի բնական գիտությունների ակադեմիայից Հայկական կենտրոնի պատվավոր նախագահ, ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ
Մ. Յու. ԳԱՍՊԱՐՅԱՆ
ՌԲԳԱ Հայկական կենտրոնի նախագահ

Եվրոպական երկրների ակադեմիաների ընկերակցության (ALLEA) փոխնախագահ, պրոֆեսոր ՔԵՅ ԳՐԱՀԱՄԻ ելույթը ՀՀ ԳԱԱ հոբելյանական հանդիսավոր նիստում

Հանրապետության հարգելի՛ Նախագահ,
Նորին Սրբություն,
Հարգելի՛ Նախագահ Մարտիրոսյան,
Հարգելի՛ գործընկերներ,
Տիկնա՛յք և պարոնա՛յք

Ինձ համար մեծ պատիվ է որպես ALLEA-ի, ինչպես նաև հումանիտար գիտությունների ակադեմիայի եվրոպական դաշնության փոխնախագահ, սրտանց շնորհավորել ձեզ Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիայի 75-ամյակի այս հատուկ առիթով:

Իմ ջերմագին շնորհակալությունն եմ հայտնում բոլոր նրանց, ովքեր նպաստել են տոնակատարության այսպիսի հաջողությանը և Ձեր հրաշալի հյուրընկալության համար:

Մենք ALLEA-ում համարում ենք, որ Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիան արժանի է կոչել նրա ճանաչված և բարձրարժեք ակադեմիաներից մեկը: ALLEA ցանցը բաղկացած է 58 ակադեմիայից, որոնք տարածվում են Եվրախորհրդի տարածքում և ԵՄ-ից դուրս: Մենք ներկայացնում ենք գիտության ակադեմիաները և բոլոր ոլորտները՝ սկսած հասարակական և հումանիտար գիտություններից մինչև բնական և կիրառական գիտություններ:

Ձեր հոյակապ հաստատությունը վերջին 5 տարիների ընթացքում եղել է ALLEA ցանցի լիիրավ անդամ, և մենք ուրախ ենք, որ դուք և այս պատմական հաստատությունը, որտեղ մենք այսօր հավաքվել ենք, անընդհատ զարգացող ALLEA համայնքի մի մասն է:

Սա իմ առաջին այցն է Հայաստան, և ես արդեն որոշում եմ կայացրել կրկին վերադառնալ, որպեսզի տեսնեմ մշակութային հարուստ և աշխարհագրական այս գեղեցիկ երկիրը: Ես գիտեի, որ Հայաստանն աշխարհում առաջին երկիրն է, որն ընդունել է քրիստոնեությունը որպես իր պետական կրոն 4-րդ դարի սկզբին, որ Երևանը աշխարհի ամենահին քաղաքն է և փաստագրել է իր հիմնադրման ճշգրիտ ամսաթիվը, և որ հարուստ ժառանգությունն այս երկրում գալիս է հին-հին ժամանակներից:

Ես նաև լսել էի Մատենադարանի ձեռագրերի թանգարանի մասին, բայց անպատրաստ էի տեսնել ձեռագրերի և գրքերի տպավորիչ ու եզակի հավաքածու: ՀՀ ԳԱԱ-ի ինստիտուտների և գիտահետազոտական կենտրոնների ցուցահանդեսը մեզ ցույց տվեց Հայաստանում որակյալ և գերազանց հետազոտությունների լայն շրջանակը: Ձեր ակադեմիան խթանում և իրականացնում է հիմնարար և կիրառական հետազոտությունները գիտական ոլորտի տարբեր բնագավառներում, ինչպես նաև համակարգում է հետազոտությունները Հայաստանի ողջ տարածքում՝ ավելի քան 35 գիտական հաստատություններ, 3700 գիտաշխատող, այդ թվում՝ 87 ակադեմիկոս: Ձեր երկրի 2011-2020 թթ. գիտության զարգացման ռազմավարությունը նախատեսում է, որ «...մինչև 2020-ը Հայաստանը կդառնա մի երկիր, որը կունենա գիտելիքի վրա հիմնված տնտեսություն և մրցունակ կլինի եվրոպական հետազոտական տարածքում»: Եվ ես կարծում եմ, որ դուք արդեն հասել եք այդ նպատակին: Հայաստանի բարձրագույն կառավարման մարմինների պաշտոնական գիտական խորհրդատու լինելուց բացի, ՀՀ ԳԱԱ նախագահությունը ներառում է նաև Հիմնարար գիտական գրադարանը, Միջազգային գիտակրթական կենտրոնը և «Գիտություն» հրատարակչությունը: Դուք նաև ունեք տպավորիչ միջազգային շփումների ցանկ, և ուրախ եմ տեսնել, որ դրանցից մեկը իմ սեփական ակադեմիայի էդինբուրգի Թագավորական միության հետ է:

Ձեր հաջողությունն ամենաազդեցիկն է, երբ հայացք ենք գցում վերջին 75 տարիների ընթացքին: Հայկական ակադեմիայի ուղին իր ներկա նվաճումներով հանդերձ հարթ չի եղել: Այս հաստատությունն ականատեսն է եղել այնպիսի պատմական իրադարձությունների, որոնք իրենց ազդեցությունն են թողել ոչ միայն այս ակադեմիայի, այլև եվրոպական մայրցամաքի, ընդհանրապես ամբողջ աշխարհի պատմության վրա: Այս ակադեմիան վեր է հառնել 1943 թ. նոյեմբերին, այն ժամանակ, երբ մայրցամաքն ապրում էր Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիները: Գրեթե երեք տասնամյակ առաջ ԽՍՀՄ-ի փլուզումը նույնպես ազդել է այս երկրի, այս տարածաշրջանի վրա՝ առաջացնելով քաղաքական և տնտեսական անկայունություն և դժվարություններ: Անշուշտ, ՀՀ ԳԱԱ գիտական աշխատանքը ևս կրել է դժվարություններ այդ տարիներին, սակայն վերջինիս հաջողվեց հաղթահարել այդ փուլը և հաստատակամորեն առաջխաղացումներ ձեռք բերել գիտական բոլոր ոլորտներում:

Եվ քանի որ երկիրն ու տարածաշրջանը վերականգնվել են, գիտական ակադեմիան երբեք չի կորցրել իր կենսական դերը հայ հասարակության զարգացման և առաջընթացի գործում շնորհիվ ձեր լուսավոր առաջնորդների և նախագահների, ի դեմս պրոֆեսոր Օրբելու և 2006 թվականից ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանի ջանքերի:

Այս հաստատությունը օրինակ է, թե ինչպես պետք է հարմարվել դժվարություններին և ինչպես բարեփոխվել՝ լավագույնս լուծելու հասարակության կարիքները: Այն ջանքեր է գործադրել, որպեսզի պահպանի իր առանցքային գիտական ծրագրերը, պահպանի իր կարողությունները և ընդլայնի միջազգային կապերն ու համատեղ ջանքերը, որոնք զորեղացնում և ամրապնդում են մեր ունակությունները գիտական ջանքերի ներգրավման և առաջխաղացման համար: Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիան պատմական գանձ է, և ես անկեղծորեն հույս ունեմ, որ այն շարունակելու է վկա լինել իր հիմնադրման համար նշվող ավելի շատ հոբելյանների:

Սակայն գիտության, փորձաքննության և ապացույցների վրա հիմնված գիտելիքների ստեղծման մարտահրավերները ոչ միայն չեն վերացել, այլև փոխակերպվել են՝ դառնալով ավելի բարդ և խրթին: Եվրոպական գիտական ակադեմիաները չեն կարող դիմակայել նրանց, եթե նրանք ինքնուրույն աշխատեն միմյանցից. միջազգային գործընկերների հետ մեր համագործակցությունը շատ կարևոր է: Հաջորդ տարի նշվելու է ALLEA-ի հիմնադրման 25-ամյակը որպես հովանավոր կազմակերպություն, որը միավորում է ոչ միայն ակադեմիաները, այլև ընդհանուր արժեքները, լեզուները, փորձը և արժեքավոր գիտական փոխանակումը: Մեր անդամ ակադեմիաներին միավորելով միասնական ցանցում՝ մենք ձգտում ենք հասնել գիտության զարգացմանը՝ միևնույն ժամանակ մնալով անկախ քաղաքական, առևտրային և գաղափարական շահերից: Մենք նշելու ենք ALLEA-ի 25-ամյակը ամենամյա Գլխավոր ասամբլեայի հետ միասին հաջորդ տարվա մայիսին Շվեյցարիայի մայրաքաղաք Բեռն քաղաքում «Գիտությունը և հասարակությունը այսօրվա Եվրոպայում» թեմայով: Մեր նպատակն է անցյալի ձեռքբերումներին նայել ժամանակակից տեսանկյունից՝ ավելի լավ ապագա կառուցելու համար, մի ապագա, որը, ես ուրախ եմ ասել, իսկապես ներառում է Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիան:

Այս ակադեմիան կայունության և տոկունության օրինակ է թողել, և մենք բոլորս էլ պատրաստ ենք սովորելու նրա պատմությունից և գիտական ձեռքբերումներից: Եկեք վայելենք այս երեկոն տոնելու, ինչպես նաև ներկայի աչքերով անդրադառնալու նրա նախկին նվաճումներին, որպեսզի երբեք չկորցնենք այն, ինչով կկարողանանք նպաստել ավելի լավ ապագայի կերտմանն ու ձեռքբերումներին:

ՀՀ ԳԱԱ-ում անցկացվեց «Չինաստան-Եվրասիա» միջազգային գիտաժողովը

2018թ. հոկտեմբերի 26-ից 27-ը ՀՀ ԳԱԱ-ում տեղի ունեցավ «Չինաստան-Եվրասիա» միջազգային գիտաժողովը: Այն կազմակերպվել էր «Չինաստան-Եվրասիա» քաղաքական և ռազմավարական հետազոտությունների խորհուրդ» հիմնադրամի և ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի կողմից: Գիտաժողովի անցկացմանն աջակցում էին «Հայաստանի Դիվանագիտական հիմնադրամը» և «Տրանսպորտային ծրագրերի իրականացման կազմակերպությունը»:

Անդրադառնալով գիտաժողովին՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ռուբեն Սաֆրաստյանը (ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի տնօրեն) նշեց, որ այս գիտաժողովը կխթանի Հայաստանում չինագիտության զարգացումը, կարևոր տեղեկատվություն կտարածի Չինաստանի և Եվրասիական այլ երկրների հարաբերությունների վերաբերյալ:

«Չինաստան-Եվրասիա» գիտաժողովի հեղինակ և կազմկոմիտեի հիմնադիր ղեկավար, քաղաքական գիտությունների թեկնածու Մհեր Սահակյանը («Չինաստան-Եվրասիա» քաղաքական և ռազմավարական հետազոտությունների խորհրդի» ղեկավար) նշեց, որ գիտաժողովի հիմնական նպատակն է դառնալ Չինաստանի և Եվրասիական երկրների հարաբերությունների վերաբերյալ տարվող, գիտական քննարկումների միջազգային հարթակ: Այն լավ առիթ է, որ հայ և արտասահմանցի գիտնականները միմյանց հետ փոխանակվեն հետազոտություններով, համեմատեն տարբեր երկրներում կիրառվող մեթոդաբանությունները և նպաստեն միջդիսցիպլինար երկխոսությանը:

ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի փոխտնօրեն, գիտաժողովի համակազմակերպիչ, պ.գ.թ. Ռոբերտ Ղազարյանը, շնորհավորելով բոլորին Միջազգային գիտաժողովի բացման կապակցությամբ, նշեց, որ աշխարհաքաղաքական ներկա զարգացումներում Եվրասիական տարածաշրջանում Չինաստանի վարած քաղաքականության ուսումնասիրումն ունի կարևոր քաղաքական, տնտեսական և գիտական նշանակություն Հայաստանի Հանրապետության գիտական, քաղաքական և վերլուծական շրջանակների համար:

Բանախոսների թվում էին Մա Բինը (Չինաստան, Ֆուդան համալսարան), Կոննոր Ջաջը (Մեծ Բրիտանիա, Լոնդոնի համալսարան), Սրջդան Ուլջեվիչը (Ղրղզստան, Կենտրոնական Ասիայի Ամերիկյան համալսարան), Ջուն Վանը (Չինաստան, Հոնկոնգի քաղաքային համալսարան), Աննա Ջալինյանը (Հայաստան, Անանիա Շիրակացու անվան ճեմարան), Զաքարիա Պաիկինը (Մեծ Բրիտանիա, Կանադա, Քենթի համալսարան և Global Brief Magazine-ի ավագ խմբագիր), Անատոլի Ցվուկը (Ռուսաստան, Մոսկվայի ժողովուրդների բարեկամության համալսարան), Կոնստանտին Տասիցը (Ռուսաստան, Ռազմավարական հետազոտությունների ռուսական ինստիտուտ), Ջուկկա Աուկիան (Ֆինլանդիա, Թուրկու համալսարան), Ուզմա Սիրաջը (Պակիստան, Դաշնային ուրդու համալսարան), Մհեր Սահակյանը (Հայաստան, «Չինաստան-Եվրասիա» քաղաքական և ռազմավարական հետազոտությունների խորհուրդ»), Մա Սյաոյունը (Չինաստան, Կոմունիստական կուսակցության կոմիտեի Թոնլինի կուսակցական դպրոց), Գաբրիել դե Ռեզենե Պիչինինին (Բրազիլիա, Պորտուգալիայի Մինի համալսարան), Անահիտ Պարզյանը (Հայաստան, «Չինաստան-Եվրասիա» քաղաքական և ռազմավարական խորհուրդ», հիմնադրամ), Ռոբերտ Թումանյանը (Չինաստան, Հունան համալսարան), Իզաբելլա Մուրադյանը (Չինական մշակույթի և գիտության կենտրոն), Լուիզա Գրիգորյանը (Հայաստանում Եվրոպական համալսարան), Տաի Յուլունը (Չինաստան, Նանծինի համալսարան), Վախթանգ Չարայան (Վրաստան, Իվանե Ջավախիշվիլու անվան Թբիլիսիի պետական համալսարան), Գաբրիելա Ռադուն (Ռումինիա, ռազմավարագետ), Սարեն Աբգարյանը (Չինաստան, Շանհայի Ցիաոթոն համալսարան), Շոթա Գուլբանին (Վրաստան, Կովկասի Միջազգային համալսարան), Անդրանիկ Հովհաննիսյանը (Ռուս-հայկական սլավոնական համալսարան) Խուբրիկով Բադման (Ռուսաստան, Բուրյաթիայի պետական համալսարան):

Չինաստան-Եվրասիա գիտաժողովի հրավիրյալ պատվավոր հյուրերի մեջ էին Հայաստանում Ղազախստանի արտակարգ և լիազոր դեսպան ՆԳ Թիմուր Ուրազաևը, ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար Յուրի Սուվարյանը, Բելառուսի դեսպանության ավագ խորհրդական Դմիտրի Սեմենովիչը և այլք:

Ռոբերտ ՂԱԶԱՐՅԱՆ

Սևանա լճի արդի խնդիրներին նվիրված կլոր սեղան ՀՀ ԳԱԱ-ում

➢1 որոնք, ըստ էության, հիմնավորված չեն ո՛չ գիտականորեն, ո՛չ էլ բխում են անհրաժեշտ խնդիրների լուծման անհրաժեշտությունից: Քանի որ Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողովը Գիտությունների ազգային ակադեմիայում է, ուստիև մենք կազմակերպեցինք այս քննարկումը, որպեսզի հնարավորին թվով մասնագետներ և գործին տեղյակ մարդիկ ներկա լինեն, և հնչեցնենք այն կարևոր խնդիրները և առաջարկությունները, որոնք կներկայացնենք կառավարությանը և համապատասխան մարմիններին»,- իր ելույթում մասնավորապես ասաց ՀՀ ԳԱԱ Ռադիկ Մարտիրոսյանը:

«Սևանա լճի հիմնախնդիրները խիստ արդիական են, քանի որ գոյություն ունեն Սևանա լճի մակարդակի բարձրացման հարցերը, որոնցից է առաջին հերթին կախված ջրի որակը: Այս տարի մենք ականատես եղանք Սևանա լճի մեծ մասշտաբի ծաղկմանը կապտականաչ ջրիմուռներով: Լուրջ խնդիր է նաև լճում կենսառեսուրսների ոչ պատշաճ մակարդակի պահպանությունը:

Սևանա լճի հիմնախնդիրների, ինչպես նաև Արարատյան դաշտի ոռոգելի հողատարածքների և ոռոգման ջրի խնդիրների վերաբերյալ զեկուցումներով հանդես եկան ՀՀ ԳԱԱ-ին առընթեր Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողովի նախագահ, «Հայջրնախագիծ» ՓԲԸ խորհրդի նախագահ Յուրի Ջավադյանը, ՀՀ ԳԱԱ կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի տնօրեն Բարդուխ Գաբրիելյանը, ՀՀ ԳԱԱ երկրաբանական գիտությունների ինստիտուտի տնօրեն Խաչատուր Մելիքսեթյանը, ՀԱԱՀ «Հ. Պետրոսյանի անվան Հողագիտության, ագրոքիմիայի և մելիորացիայի գիտական կենտրոն» մասնաճյուղի տնօրեն Հունան Ղազարյանը, «Հայջրնախագիծ» ՓԲԸ, «ՄԵԼ-ՀՈՎ» ՍՊԸ-ի տնօրեն Վլադիմիր Թադևոսյանը: Ելույթներով հանդես եկան ՀՀ ԳԱԱ ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտի տնօրենի տեղակալ Հրաչյա Ասցատրյանը, «Խիմմաստեր» ՍՊԸ-ի նախագահ Մանվել Գաբրիելյանը:

Կլոր սեղանն ընդունեց բանաձև, որում նշված է. «Կլոր սեղանի մասնակիցները, լսելով Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողովի նախագահի հաշվետվությունը, ՀՀ ԳԱԱ գիտահետազոտական կազմակերպությունների ղեկավարների, նախարարությունների և այլ հաստատությունների, ինչպես նաև գիտական հանրության ներկայացուցիչների ելույթները, եկան հետևյալ եզրակացությունների.

1. Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողովն ուսումնասիրել, քննարկել և եզրակացություններ է տվել հետևյալ հարցերի շուրջ.

* Սևանա լճի մակարդակի իջեցման կանխարգելման և լճի մակարդակի՝ օրենքով սահմանված չափով բարձրացման առաջընթացն ապահովելու համար անհրաժեշտ է իրականացնել.

ա) ջրի տակ մնացած շենք-շինությունների ապամոնտաժում և հատված ծառերի արմատների հեռացում.

բ) ջրօգտագործման կառավարման, անկորուստ և արդյունավետ օգտագործման, դերիվացիոն և մայր ջրանցքների գլխամասերում ջրաչափման գործընթացների ավտոմատացված համակարգի ստեղծում:

* «Սևան» ազգային պարկի գիտական ներուժի և ՀՀ ԳԱԱ-ի համապատասխան ինստիտուտների հետ նրա համագործակցության վերականգնման հզորացում:

* Սևանա լճի պարտադիր վեց մետր և ավելի բարձրացման դրույթի իրականացման և «Սևանա լճի մասին ՀՀ օրենքով» նախատեսված գործառնական գոտիների համար ամրագրված սահմանափակումների ապահովում:

* Նախկինում ստեղծված Սևանի և նրա ջրհավաք ավազանի մշտադիտարկումների տվյալների միասնական էլեկտրոնային շտեմարանի ընթացիկ սպասարկման շարունակում՝ կառավարության կողմից լիազորված՝ Սևանա լճում և նրա ջրհավաք ավազանում մշտադիտարկումներ կատարող կազմակերպությունների կողմից ներկայացված տվյալների հիման վրա:

* Արփա-Սևան թունելի վերականգնողական աշխատանքների գործընթացների վրա վերահսկողության սահմանում:

* Վերահսկողության սահմանում ջրավազանի գետերում կառուցված ՓՀԷԿ-ի նվազագույն հոսքերի և ձկնանցարանների տեխնիկական վիճակի կարգավորման գործընթացի վրա:

2. Զեկուցողները ներկայացրին իրենց հաստատություններում կատարված ուսումնասիրությունների արդյունքները.

* ՀՀ ԳԱԱ-ին առընթեր Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողովի և ՀՀ ԳԱԱ երկրաբանական գիտությունների ինստիտուտի կողմից իրականացվում են Սևանա լճի ջրհավաք ավազանում և ազդեցության գոտում օգտակար հանածոների շահագործման գեոէկոլոգիական ռիսկերի, ջրաերկրաքիմիական, երկրաբանական վտանգավոր երևույթների գնահատման աշխատանքներ:

* ՀՀ ԳԱԱ կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնը կատարում է ուսումնասիրություններ՝ ուղղված Սևանա լճի կենսառեսուրսների և լճի էկոհամակարգի և ջրհավաք ավազանի վիճակի գնահատմանը, ինչպես նաև ՀՀ կառավարությանը պարբերաբար ներկայացնում է առաջարկություններ և գնահատականներ այդ հարցերի շուրջ:

Հաշվի առնելով, որ թվարկված միջոցառումների իրականացումը կրում է շարունակական բնույթ, Սևանա լճի և ջրավազանի էկոհամակարգի և էկոլոգիական հավասարակշռությանն առնչվող խնդիրների լուծման նպատակով, այդ թվում՝ հանձնաժողովի հետագա գործունեության ընթացքում, առաջարկվում է.

1. ձեռնարկել Սևանա լճի ափերի մաքրման անհետաձգելի միջոցառումներ, իրականացնել բացատրական աշխատանքներ բնակչության շրջանում լճի և նրա ափերի՝ կենցաղային աղբից մաքրման վերաբերյալ:

2. Սևանա լճի և նրա ջրհավաք ավազանի բնօգտագործման նորմավորման ու կանոնակարգման միջոցով լճի էկոհամակարգի և դրա առանձին բաղադրիչների վրա անթրոպոգեն բացասական ներգործությունների (այդ թվում՝ աղտոտվածության) նվազեցում:

3. Հատուկ ուշադրություն դարձնել «Սևանա լճի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածում նշված կետերի կատարման գործընթացների վրա, մասնավորապես շուրջ 300 մշտական գործող հանգստի և զվարճանքի վայրերից (հյուրանոցներ, ռեստորաններ և այլն) կեղտաջրերի մաքրման կայանների կառուցում:

4. Լճում ձկան պաշարների վերականգնման և խեցգետնի արդյունագործական պաշարների հետագա անկումը կանխելու նպատակով անհրաժեշտ է անհապաղ բարեփոխել ապօրինի ձկնորսության դեմ պայքարի մոտեցումները և լճում գոյություն ունեցող ձկնորսության համակարգը:

5. Սևանա լճի ավազանում, Վարդենիս, Մարտունի և Գավառ քաղաքներում կառուցված կեղտաջրերի մեխանիկական մաքրման կայանների արդյունավետության բարձրացման համար անհրաժեշտ է նախատեսել բնակավայրերի կոյուղային ցանցերի և կենսաբանական մաքրման կայանների կառուցում:

6. Շարունակել շտեմարանի ստեղծման համար օգտագործված ծրագրային հարթակի լրամշակման գործընթացները և կատարել շտեմարանի տեխնիկական սպասարկում, այն է՝ թարմացնել օգտագործվող ծրագրային փաթեթները և շտեմարանում մշտադիտարկումների տվյալների գրանցումն ու պահպանումը:

7. Նախատեսել Սևանա լճի և ավազանի գետերի ջրի մակարդակի մոնիթորինգի ավտոմատացված համակարգի մշակում և իրականացում-նպատակային հայտի քննարկում, Սևանա լճի ավազանի Գեոպարկի ստեղծման գաղափարի ներկայացում»:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական ծառայություն

Խորը կսկիծով հայտնում ենք, որ անժամանակ կյանքից հեռացավ մեր սիրելի տնօրեն Կարապետ ՄԻՆԱՍՅԱՆԸ:

1976 թվականից նա աշխատել է ՀՀ ԳԱԱ հիմնարար գիտական գրադարանում և իր ավանդը ներդրել գրադարանի զարգացման և ծաղկման գործում՝ սկզբում որպես մատենագետ, հետո գիտքարտուղար և ապա որպես տնօրեն: Գրադարանի կոլեկտիվը կորցրեց անգնահատելի մասնագետ և նվիրված աշխատանքային ընկերոջը: ՀՀ ԳԱԱ հիմնարար գիտական գրադարանի ողջ կոլեկտիվն իր ցավակցությունն է հայտնում ընտանիքին, հարազատներին և նրան ճանաչող ու սիրող մտերիմներին:

Կարապետ Հովհաննեսի Մինասյանը ծնվել է 1953 թ. Երևանում: 1961-1971 թթ. սովորել է N 119 ֆրանսիական թեքումով միջնակարգ դպրոցում, որն ավարտել է ոսկե մեդալով:

1971-76 թթ. սովորել է ԵՊՀ-ի բանասիրական ֆակուլտետի ռոմանագերմանական բաժնում: 1976-2018 թթ. աշխատել է ՀՀ ԳԱԱ ՀԳԳ-ում՝ որպես մատենագետ, գիտքարտուղար և տնօրեն:

ՀՀ ԳԱԱ հիմնարար գիտական գրադարանի կոլեկտիվ

ՎԱՍՏԱԿԱՇԱՏ ԳԻՏՆԱԿԱՆԸ

Վանդիկա Երվանդի Ավետիսյանի 90-ամյա հոբելյանի առթիվ

Վանդիկա Երվանդի Ավետիսյանը ծնվել է 1928 թ. հոկտեմբերի 5-ին Երևանում:

Ապագա բուսաբանը, կարգաբանը, Խաչածաղկավորների ընտանիքի մենագիրը դեպի գիտություն իր ուղին սկսել է Ա. Ս. Պուշկինի անվան թիվ 8 միջնակարգ դպրոցում, որն ավարտել է 1946 թ. և նույն տարում էլ ընդունվել է Երևանի պետական համալսարանի կենսաբանական ֆակուլտետ:

Ավարտելով ուսումը համալսարանում 1951 թ. Վ. Ե. Ավետիսյանը դառնում է Հայաստանի գիտությունների ակադեմիայի բուսաբանության ինստիտուտի ասպիրանտ: Նրա ուսուցիչն էր ականավոր գիտնական Արմեն Թախտաջյանը, ով այդ ժամանակահատվածում արդեն ստիպված էր լքել Հայաստանը՝ վեյստմանիստ-մորգանիստներին սատարելու մեղադրանքով, և աշխատել Լենինգրադի ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի Վ. Լ. Կոմարովի անվան բուսաբանական ինստիտուտում: Վանդիկա Ավետիսյանը գործուղվում է Լենինգրադ, որտեղ 1955 թ. հաջողությամբ պաշտպանում է թեկնածուական ատենախոսություն՝ «Inula L. ցեղի կովկասյան ներկայացուցիչները» թեմայով: Ավելի ուշ այն տպագրվել է որպես մենագրություն:

Նույն թվականին նա վերադառնում է Երևան՝ բուսաբանության ինստիտուտ, որտեղ աշխատում է բարձրակարգ բույսերի կարգաբանության և աշխարհագրության բաժնում՝ սկզբում որպես կրտսեր, 1960 թ.-ից՝ ավագ գիտաշխատող, իսկ 1973-1989 թթ. նա ղեկավարել է բաժինը: 1989 թ. Վանդիկա Ավետիսյանը նշանակվել է բուսաբանության ինստիտուտի հերբարիումի գիտական ղեկավար, այնուհետև առաջատար գիտաշխատող:

Նրա ղեկավարման տարիներին բուսաբանության ինստիտուտի բույսերի կարգաբանության և աշխարհագրության բաժինը հագեցած էր ոչ միայն «Հայաստանի ֆլորան» բազմահատորյակի համար տաքսոնների ուսումնասիրությանը վերաբերող աշխատանքներով, այլ նաև Կովկասի ֆլորայում հարուստ ներկայացված Խաչածաղկավորների հսկայական ընտանիքի ուսումնասիրություններով: 1991 թ. Վ. Ե. Ավետիսյանը պաշտպանել է դոկտորական ատենախոսություն «Կովկասի Խաչածաղկավորները (Brassicaceae ընտանիք)» թեմայով: Իր աշխատանքում Վ. Ե. Ավետիսյանը քննարկել է այդ ընտանիքի ոչ միայն կարգաբանական հարցերը, այլև ուսումնասիրել էվոլյուցիան, աշխարհագրությունը, Խաչածաղկավորների խոցելի տեսակների պաշտպանության հարցերը:

Վ. Ե. Ավետիսյանը հեղինակ է ավելի քան 150 գիտական աշխատանքների, նա խմբագրել է «Հայաստանի ֆլորան» բազմահատորյակի բազմաթիվ հատորներ:

Վ. Ե. Ավետիսյանը բազմաթիվ գիտարշավների մասնակից է եղել ոչ միայն Հայաստանում, այլ նաև Խորհրդային Միության տարածաշրջաններում: Այդ գիտարշավներն ընդգրկել են ԽՍՀՄ-ի բոլոր հետաքրքիր ֆլորիստական շրջանները՝ Կոլայի թերակղզին, Տյան-Շանի և Պամիրի բարձրադիր գոտիները, Կոպետդաղի նախալեռները, Կարակում անապատը, Իսիկ Կուլ լճի ավազանը, Մերձբալթյան երկրները, Կարպատյան լեռները, Մոլդովան, Ծովամերձ երկիրը, Կամչատկան, Սախալինը, Կունաշիր և Շիկոտան Կուրիլյան կղզիները, Բալթյան ծովի ավազանը, Ուրալյան լեռնաշղթան և Ալթայը:

Գիտական աշխատանքները և բաժինը ղեկավարելուն զուգընթաց Վ.Ե.Ավետիսյանն ակտիվ իրականացրել է հրատարակչական գործունեություն: Տարբեր տարիների նա եղել է «Հայաստանի կենսաբանական հանդեսի», ինչպես նաև «Հայաստանի ֆլորան, բուսականությունն ու բուսական ռեսուրսները» և «Թախտաջանիա» բուսաբանական հանդեսների խմբագրական կոլեգիայի կազմում:

Համամիութենական բուսաբանական ընկերության խորհրդի անդամ, ՀՀ բուսաբանական միության անդամ, «OPTIMA»՝ Միջերկրածովային բուսականության և ֆլորայի ուսումնասիրության կազմակերպության անդամ: Այս բոլորը վկայում են Երկիր մոլորակի բուսականության ուսումնասիրման և պահպանման գործում Վ. Ե. Ավետիսյանի արգասավոր գործունեության մասին:

Իր գիտական աշխատանքների արդյունքների վերաբերյալ նա բազմիցս հանդես է եկել զեկույցներով՝ մասնակցելով տարածաշրջանային, համամիութենական և միջազգային բազմաթիվ գիտաժողովների և կոնգրեսների աշխատանքներին:

Նրա գիտական ձեռքբերումները բարձր են գնահատվել. 1975 թ. Վ. Ե. Ավետիսյանը ստացել է 12-րդ միջազգային բուսաբանական կոնգրեսի բրոնզե շքանշան (Լենինգրադ): Նա արժանացել է հետևյալ պետական պարգևներին՝ «За доблестный труд» (1970 թ.), Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի պատվոգիր (1979 թ.), ԽՍՀՄ Գերագույն խորհրդի մեդալ «За трудовую доблесть» (1981 թ.), ԽՍՀՄ Գերագույն խորհրդի մեդալ «Ветеран труда» (1984 թ.), ՀՀ ԳԱԱ Վաստակագիր (2008 թ.):

Շնորհավորում ենք մեր սիրելի գործընկերոջը հոբելյանի առթիվ և ՀՀ ԳԱԱ Ա. Թախտաջյանի անվան բուսաբանության ինստիտուտի ողջ կոլեկտիվի անունից ցանկանում քաջ առողջություն և հաջողություններ:

Ժ. Հ. ՎԱՐԴԱՆՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Ա. Թախտաջյանի անվան բուսաբանության ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ

Մ. Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Ա. Թախտաջյանի անվան բուսաբանության ինստիտուտի Բարձրակարգ բույսերի կարգաբանության և աշխարհագրության բաժնի վարիչ, կ. գ. դ.

Արժեքավոր ժողովածու Հայաստանի Առաջին հանրապետության խորհրդարանի մասին



2018 թվականին հայությունը տոնում է Հայաստանի անկախության վերականգնման մեկդարյա հոբելյանը: Չնայած երկուսուկեսամյա կարճատև գոյությանը՝ Հայաստանի Առաջին հանրապետությունը նկատելի հետք թողեց հայության ճակատագրում: Հայաստանի Հանրապետության 100-ամյակին նվիրված հրատարակությունների շարքում յուրօրինակ տեղ կարող է գրավել ՀՀ Ազգային ժողովի կողմից հրատարակված «Հայաստանի առաջին Հանրապետության խորհրդարանը» խորագրով արժեքավոր ժողովածուն (խմբագրական խորհրդի նախագահ՝ Թաթուլ Սողոմոնյան, անդամներ՝ Գրիգոր Թանանյան, Անուշավան Զաքարյան): Այն կազմել և հրատարակության է պատրաստել բանասիրական գիտությունների դոկտոր Անուշավան Զաքարյանը: Ժողովածուն նվիրվում է Առաջին հանրապետության խորհրդարանի 100-ամյակին:

Ժողովածուն բացվում է կազմողի գրած «Երկու խոսք»-ով, որտեղ սեղմ տողերում արժևորվում է Առաջին հանրապետության ստեղծումը, ներկայացվում գրքի նպատակը, կառուցվածքն ու ընդգրկող հարցադրումների շրջանակը:

Այնուհետև Գրիգոր Թանանյանը «Հայաստանի առաջին Հանրապետության խորհրդարանը (համառոտ ակնարկ)» խորագրով համեմատաբար ընդարձակ շարադրանքում քննության նյութ է դարձրել հետևյալ հարցերը՝ Հայաստանի անկախացման գործընթացին անքակտելիորեն առնչվող իրադարձությունները (1917 թ. սեպտեմբեր-հոկտեմբերի արևելահայության համագումար, Անդրկովկասյան կոմիսարիատի և սեյմի գործունեություն և այլն), Անդրկովկասյան սեյմի լուծարմանը, Հայաստանի անկախացմանը, օրենսդիր ու գործադիր իշխանության մարմինների ձևավորմանը, Հայաստանի խորհրդի կազմակերպմանը, առաջին նիստերում քննարկված հարցերին, կանոնակարգին, պառլամենտական ընտրությունների մասին օրենքին, 1919 թ. հունիսյան ընտրություններին, նորընտիր պառլամենտի բացմանն ու գործունեությանը, կառավարությունների կազմերին, պետական օրենսդրության ստեղծման բնագավառում պառլամենտի ու կառավարության՝ երբեմն իրար հատվող լիազորություններին, խորհրդարանական կուսակցություններին ու մշտական հանձնաժողովներին, ընդունված հիմնական օրենքներին, վարչապետների և խորհրդարանի նախագահների, տեղակալների ու քարտուղարների պաշտոնավարության ամսաթվերին: Ընդգծենք, որ հեղինակը բացահայտում և հավուր պատշաճի արժևորում է ՀՀ կյանքում Հայաստանի խորհրդի ու պառլամենտի ունեցած տեղն ու դերը՝ եզրակացնելով, որ Առաջին հանրապետության խորհրդարանն «իր ձևով ու բովանդակությամբ՝ կազմավորման սկզբունքներով, կառուցվածքով, հիմնական գործառույթներով, լիովին համապատասխանում էր պառլամենտարիզմի ժամանակի բոլոր չափանիշներին»:

Ժողովածուում ներառված են 1918 թ. օգոստոսի 1-ին Երևանում գումարված Հայաստանի խորհրդի անդրանիկ նիստի մասին ՀՅԴ «Ձանգ» պարբերականի լուսաբանող հոդվածը (նիստի սղագրության արխիվային տարբերակը հայտնի չէ), խորհրդի անդամների անվանացանկը, գործունեության կանոնակարգը, 1919 թ. մարտի 31-ին ընդունված պառլամենտի ընտրությունների մասին օրենքը, 1919 թ. օգոստոսի 1-ին նորընտիր պառլամենտի անդրանիկ նիստի բացմանը ավագագույն պատգամավոր Ավետիք Սահակյանի ելույթը, ընտրված 80 պատգամավորների անվանացանկը: Ցանկանում ենք հատուկ ընդգծել, որ սույն ժողովածուում առաջին անգամ ռուսերենից հայերեն թարգմանությամբ հրատարակված է Հայաստանի խորհրդի կանոնակարգը: Ժողովածուի վերջին մասում ընթերցողի ուշադրությանն են ներկայացվում Հայաստանի խորհրդի և պառլամենտի նախագահներ Ավետիք Սահակյանի, Ավետիս Ահարոնյանի և Հովհաննես Քաջազնունու, ինչպես նաև պառլամենտի երեք կին անդամների՝ Պերճուհի Պարտիզպանյան-Բարսեղյանի, Կատարինե Զալյան-Մանուկյանի և Վարվառա Ռոտինյան-Սահակյանի համառոտ կենսագրություններն ու լուսանկարները: Բացի դրանից, գրքում տեղադրված են հանրապետության պետական խորհրդանիշների (դրոշ, զինանշան), թղթադրամների, խորհրդարանի շենքի, մուտքի անցաթղթի լուսանկարները:

Առաջին հերթին ուղղված լինելով ընթերցասեր և հայրենի պետության ոչ վաղ անցյալի մասին տեղեկություններ փնտրող հանրությանը՝ վստահ ենք, որ սույն ժողովածուն կկատարի այդ առաքելությունը՝ Հայաստանի Առաջին հանրապետության և նրա խորհրդարանի մասին արժանահավատ տեղեկություններ մատուցելով ընթերցողին: Ուստի, երիցս դրվատելի է սույն գիրքը հրատարակության պատրաստողների կատարած իսկապես գնահատելի ու շնորհակալ աշխատանքը: Հուսանք՝ առաջիկայում ընթերցողի սեղանին կդրվեն նաև գրքի ռուսերեն և անգլերեն տարբերակները:

Համո ՍՈՒՔԻԱՍՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ,
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող

«ԲԱԼԹԻԿԱՅԻՑ ՄԻՆՉԵՎ ՍԵՎ ԾՈՎ.

ՀԱՅԵՐԸ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ, ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ» ԹԵՄԱՅՈՎ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԸՆԴԳՐԿՈՒՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ ՀՀ ԳԱԱ 75-ԱՄՅԱԿԻՆ ԸՆԴԱՌԱՋ

ՀՀ ԳԱԱ հիմնադրման 75-ամյա հոբելյանական միջոցառումների շարքը նշանավորվեց նաև «Բալթիկայից մինչև Սև ծով. հայերը մշակութային, տնտեսական և քաղաքական գործընթացներում» թեմայով հայագիտական միջազգային գիտաժողովով, որը տեղի ունեցավ 2018 թ. հոկտեմբերի 15-18-ին Երևանում:

Միջազգային գիտաժողովի կազմակերպիչը Հայագիտական հետազոտությունների զարգացման և աջակցության «ԱՆԻՎ» հիմնադրամն էր (գլխավոր տնօրեն Արմեն Խեչոյան՝ կազմակերպիչ հանձնաժողովի նախագահ): Արդեն մի քանի տասնամյակ է, ինչ «ԱՆԻՎ» հիմնադրամը ֆինանսավորում է հայագիտական որոշակի ուսումնասիրություններ, հրատարակում գրքեր, իսկ վերջերս նաև երկու տարին մեկ կազմակերպում է գիտաժողովներ՝ նպատակ ունենալով հայագետներին ծանոթացնել ոլորտում տեղի ունեցող գործընթացներին:

Սույն գիտաժողովը Հայագիտական հետազոտությունների զարգացման և աջակցության «ԱՆԻՎ» հիմնադրամի կազմակերպած միջազգային ընդգրկման չորրորդ խոշոր հավաքն էր (առաջինը՝ «Հայկական համայնքների գեղարվեստական մշակույթը Ռեչ Պոսպոլիտայի հողի վրա», 2012 թ., 9-11 հոկտեմբերի, Մինսկ, Բելառուսի Հանրապետության Ազգային գեղարվեստի թանգարան, երկրորդը՝ «Հայ-բելառուսական պատմամշակութային կապերը. Ավանդույթներ և արդիականություն», 2015 թ., 21-22 մայիսի, Մինսկ, Բելառուսի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի պատմության ինստիտուտ, երրորդը՝ «Հայ սփյուռքը և հայ-ռուսական հարաբերությունները. պատմություն և արդիականություն», 2016 թ., 13-17 սեպտեմբերի, Մոսկվա, Մ. Վ. Լոմոնոսովի անվան պետական համալսարան):

Գիտաժողովի համակազմակերպիչներից էին ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտը, Բելառուսի Հանրապետության ԳԱԱ պատմության ինստիտուտը, Գիտելիքների լեհական ակադեմիան, Ռուս-հայկական (Սլավոնական) համալսարանը, Երևանի Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտը՝ Մատենադարանը, Ռուսաստանի Դաշնության մշակույթի նախարարության Արվեստագիտության պետական ինստիտուտը, Երևանի պետական համալսարանը (ԵՊՀ), Մոսկվայի Մ. Վ. Լոմոնոսովի անվան պետական համալսարանի պատմության ֆակուլտետը, Բելառուսի Հանրապետության պետական համալսարանի պատմության ֆակուլտետը:

Միջազգային գիտաժողովի կազմակերպչական կոմիտեի անդամներն էին Հայագիտական հետազոտությունների զարգացման և աջակցության «ԱՆԻՎ» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ, տնտ. գ. թ. Արտյոմ Կոնստանդյանը, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պ. գ. դ., պրոֆեսոր Աշոտ Մելքոնյանը, Բելառուսի Հանրապետության պետական համալսարանի պատմության ֆակուլտետի կրթական նորարարությունների և միջազգային համագործակցության գծով դեկանի տեղակալ, պ. գ. թ., դոցենտ Անդրեյ Պրոխորովը, Բելառուսի ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտական քարտուղար, պ. գ. թ., դոցենտ Անդրեյ Սոլովյանովը, Մոսկվայի Մ. Վ. Լոմոնոսովի անվան պետական համալսարանի պատմության ֆակուլտետի Սփյուռքի պատմության լաբորատորիայի վարիչ, պ. գ. թ., դոցենտ Օքսանա Սոլոպովան, Լեհաստանի Յագելոնյան համալսարանի մշակույթի պատմության և պատմական կրթության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Կշիշտոֆ Յան Ստոպկան, Երևանի Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտի՝ Մատենադարանի տնօրեն, պ. գ. դ. Վահան Տեր-Ղևոնդյանը, Հայագիտական հետազոտությունների զարգացման և աջակցության «ԱՆԻՎ» հիմնադրամի խորհրդի նախագահ Արտաշես Շիրիկյանը:

Գիտաժողովի պատասխանատու քարտուղարներն էին ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի նոր պատմության բաժնի կրտսեր գիտաշխատող Նինետա Ադամյանը և Հայագիտական հետազոտությունների զարգացման և աջակցության «ԱՆԻՎ» հիմնադրամի ծրագրերի համակարգող Եվգենի Գուրինովը:

Պատմաաշխարհագրական լայն ընդգրկում ունեցող սույն գիտաժողովը հնարավորություն ընձեռեց ոչ միայն Հայաստանի գիտնականներին, այլ նաև աշխարհի շուրջ երկու տասնյակ երկրներից (Ավստրիա, ԱՄՆ, Արգենտինա, Բելառուս, Բուլղարիա, Գերմանիա, Լեհաստան, Լիտվա, Հունգարիա, Ղազախստան, Ղրղզստան, Մոլդովա, Ռումինիա, Ռուսաստան, Սերբիա, Ուկրաինա, Ֆրանսիա) մասնակցության հայտ ներկայացրած և ժամանած ավելի քան 60 հետազոտողներին լուսաբանել Բալթիկայից մինչև Սև ծով հայերի և այլ ժողովուրդների միջև փոխհարաբերությունները, ինչպես նաև գնահատել հայկական համայնքների և Հայաստանի ներդրումը հիշյալ տարածաշրջանի երկրների անցյալի ու ներկայի պատմությանը, մշակույթին ու գիտությանը: Օտար մասնակիցների թիվը զգալի էր (ընդհանուրի շուրջ 70%-ը), ինչը վկայում է միջոցառման նկատմամբ գիտական հանրության հետաքրքրության մասին:

Արտերկրի երբեմնի անհետացած գաղթօջախներում հայության թողած ժառանգության, ինչպես նաև արդեն իսկ ձևավորված կամ նորերս ձևավորվող համայնքներում հայկական էթնիկ խմբի ներկայացուցիչների կողմից իրենց երկրներում ունեցած ներդրումների բազմակողմանի ուսումնասիրումը հույժ կարևոր խնդիր է: Ահա թե ինչու սույն միջազգային գիտաժողովում ըստ ամենայնի ներառված էին հումանիտար ոլորտի տարբեր մասնագետներ (պատմաբան, արխիվագետ, ազգագրագետ, թանգարանագետ, աղբյուրագետ, բանագետ, փիլիսոփա, սոցիոլոգ, արվեստագետ, մշակութաբան, քարտեզագետ, միջազգայնագետ, տնտեսագետ և այլն), ինչը թույլ տվեց հայ համայնքների պատմությունը դիտարկել նաև միջառարկայական տեսանկյունից: Ելույթ ունեցողները, հանդես գալով երեք լեզուներով (հայերեն, ռուսերեն, անգլերեն), ներկայացրին հայ և օտար ժողովուրդների միջև պատմական, էթնոդավանաբանական, գիտամշակութային, ռազմական, միջազգային և այլ առնչությունների, փոխհարաբերությունների ու համագործակցության վերաբերյալ պատմագիտական, աղբյուրագիտական, սփյուռքագիտական և հարակից այլ թեմաներ՝ ներառելով ժամանակագրական տարբեր շրջափուլեր (անցյալից մինչև ներկա, այդ թվում՝ խորհրդային և հետխորհրդային ժամանակաշրջաններ):

Գիտաժողովի հանդիսավոր բացումը տեղի ունեցավ Երևանի Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտում՝ Մատենադարանում: Ողջույնի խոսքով հանդես եկավ ՀՀ կրթության և գիտության փոխնախարար Հովհաննես Հովհաննիսյանը: Կարևորելով նմանատիպ գիտական միջոցառումների անցկացման կենսական նշանակությունը Հայաստանի և հատկապես հայագիտության համար՝ նա մասնավորապես նշել է. «Հայագիտության բնագավառը գիտական դիսցիպլինների համակարգում իր կարևոր տեղն ունի: Չնայած տարիներ շարունակ պետության կողմից այն եղել է ուշադրության կենտրոնում, ֆինանսավորման առումով այդ ուշադրությունը բավարար մակարդակի վրա չի եղել: Հայագիտությունը տարբերվում է այլ դիսցիպլիններից նրանով, որ այն ոչ միայն գիտատեսական, այլ նաև պրակտիկ բնագավառ է՝ հայ ինքնության, հայապահպանության, անցյալն արժևորելու ու այս նոր ժամանակաշրջանում նորովի վերաիմաստավորելու տեսանկյունից: Հայագիտությունը և մասնավորապես հայերի դերը տարբեր երկրների քաղաքական, մշակութային, սոցիալական կյանքում արժևորելը մի անհատակ անդունդ է, որի ուսումնասիրումը ոչ միայն կարևոր գիտական առաքելություն է, այլ նաև գիտական հաճույք»:

Ողջույնի խոսքով հանդես եկան նաև Մատենադարանի տնօրեն, պ. գ. դ. Վահան Տեր-Ղևոնդյանը, Հայագիտական հետազոտությունների զարգացման և աջակցության «ԱՆԻՎ» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ, տնտ. գ. թ. Արտյոմ Կոնստանդյանը, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պ. գ. դ., պրոֆեսոր Աշոտ Մելքոնյանը, Լեհաստանի Յագելոնյան համալսարանի մշակույթի պատմության և պատմական կրթության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Կշիշտոֆ Յան Ստոպկան, Բելառուսի Հանրապետության պետական համալսարանի պատմության ֆակուլտետի կրթական նորարարությունների և միջազգային համագործակցության գծով դեկանի տեղակալ, պ. գ. թ., դոցենտ Անդրեյ Պրոխորովը, ՌԴ մշակույթի նախարարության արվեստագիտության պետական ինստիտուտի գիտակազմակերպչական հարցերի գծով փոխտնօրեն, արվ. գ. դ. Արմեն Ղազարյանը: Նրանք անդրադարձան հայագիտության, հայոց և տարածաշրջանի պատմագիտության և աղբյուրագիտության, պատմամշակութային ժառանգության առջև ծառացած

➤7

ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ՆԻՍՏ՝ ՆՎԻՐՎԱԾ ՄԵԾԱՆՈՒՆ ԼԵԶՎԱԲԱՆ ԳԵՎՈՐԳ ՋԱՀՈՒԿՅԱՆԻՆ

ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտը, ի նշանավորումն ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի հիմնադրման 75-ամյակի, նախաձեռնել է միջոցառումների շարք՝ նվիրված ակադեմիայի և լեզվի ինստիտուտի հիմնադրման ու զարգացման ակունքներում կանգնած մեծանուն լեզվաբաններին: Ս.թ. հոկտեմբերի 29-ին տեղի ունեցավ շարքի երկրորդ միջոցառումը՝ նվիրված ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի ակադեմիկոս, գիտության վաստակավոր գործիչ, ՀՀ պետական մրցանակի դափնեկիր, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գևորգ Բեգլարի Ջահուկյանին: Բացման խոսքով հանդես եկավ ինստիտուտի տնօրեն Վիկտոր Կատվալյանը, ներկայացրեց ինստիտուտի անցած ուղին, կարևորեց Գ. Ջահուկյանի մեծ ներդրումը ինստիտուտի կայացման և զարգացման գործում:

Լեզվի ինստիտուտին շնորհավորելու էին եկել ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար Յուրի Սուվարյանը, ԿԳՆ լեզվի կոմիտեի նախագահ Դավիթ Գյուրջինյանը, ՀՀ սփյուռքի նախարարության, ԳԱԱ տարբեր հաստատությունների, ՀՀ բուհերի ներկայացուցիչներ, մտավորականներ, ուսանողներ:

Ողջունելով ներկաներին՝ ակադեմիկոս-քարտուղար Յու. Սուվարյանը նշեց, որ նմանատիպ միջոցառումները շատ կարևոր են, լիահույս է, որ հայ լեզվաբաններին նվիրված միջոցառումները շարունակական կլինեն: «Այսօր մեր խնդիրն է ոչ միայն գնահատել նրանց վաստակը, այլև փորձել շարունակել նրանց մեծ գործը: Ես երջանկություն եմ ունեցել աշխատելու ակադեմիկոս Ջահուկյանի հետ Հայերենի բարձրագույն խորհրդում, մեծ է նրա ներդրումը ընդհանուր և համեմատական լեզվաբանության ոլորտում, նրա դիտարկումներն արժանի են համաշխարհային ճանաչման»: Լեզվի կոմիտեի նախագահ Դավիթ Գյուրջինյանը պատմեց Գ. Ջահուկյանի հետ ծանոթության մասին. դեռևս ուսանողական տարիներից Գ. Ջահուկյանն անվիճելի հեղինակություն էր իր համար, հայագիտության հսկան: Շնորհավորելով Լեզվի ինստիտուտի հոբելյանական 75-ամյակը՝ Դ. Գյուրջինյանը մաղթեց, որ Ջահուկյանի դրած բարձր չափանիշը երբեք չխարխլվի: Սփյուռքի նախարարի և նախարարության բոլոր աշխատակիցների անունից ողջույնի խոսքով հանդես եկավ Հայկ Ենգիբարյանը, շնորհավորեց ակադեմիայի և Լեզվի ինստիտուտի 75-ամյակը, մաղթեց, որ իր բարձր առաքելության մեջ ինստիտուտը միշտ հաջողի, իսկ Սփյուռքի նախարարության և Լեզվի ինստիտուտի փոխգործակցությունը կշարունակվի՝ ի նպաստ հայերենի տարածման և հայապահպանության: ՀՀ գրողների միության նախագահի, նախագահության վարչության անունից շնորհավորական խոսքով հանդես եկավ գրողների միության քարտուղար Պետրոս Դեմիրճյանը: Որպես Գ. Ջահուկյանի նախկին ուսանող՝ մի քանի դրվագ պատմեց իր ուսանողական տարիներից: Բ.գ.թ., պրոֆեսոր Լալիկ Խաչատրյանը ողջույնի խոսքում նշեց. «Լեզվի ինստիտուտը կայացած հաստատություն է հանրապետությունում, իր գոյության 75-ամյակի ընթացքում ստեղծել է մնայուն արժեքներ, իսկ այդ ֆոնին լեզվի ինստիտուտի կենսագրության մեջ եղել են անձինք, որոնք ոչ միայն լուրջ գիտնականներ, այլև գիտության կազմակերպիչներ են եղել, գիտության բարձրագույն արժեքներ դավանողներ՝ բարոյական վսեմ կերպարով... Այդպիսին էր Գ. Ջահուկյանը»:

Միջոցառման բանախոսն էր ինստիտուտի գիտաշխատող, բ.գ.թ. Մերի Սարգսյանը: Նա հանգամանալից ներկայացրեց Գ. Ջահուկյանի կյանքը և գիտական գործունեությունը, հատկապես հետաքրքիր էր տվյալների ներկայացումը թվերով: Մ. Սարգսյանն անդրադարձավ Գ. Ջահուկյանի հետազոտության բոլոր ոլորտներին՝ հայերենի համեմատական քերականություն, հայ քերականական մտքի պատմություն, հայոց լեզվի պատմություն, հայ բարբառագիտություն, ժամանակակից հայոց լեզվի նկարագրություն, հնդեվրոպական և նոստրատիկ լեզվաբանություն, ընդհանուր լեզվաբանություն, լեզվաբանության պատմություն, լեզվաբանության տեսություն... «Հարստացնելով լեզվաբանության բնագավառը նոր մտքերով, որոնք հանդես են գալիս որպես ամբողջական համակարգեր, փորձելով նպաստել հայ և համաշխարհային լեզվաբանական մտքի զարգացմանը՝ Գ. Ջահուկյանն իր աշխատություններում առաջ է քաշել լեզվաբանական զանազան խնդիրների լուծման ճշգրիտ ուղիներ: Կարելի է անվերապահորեն ասել, որ Գ. Ջահուկյանի շնորհիվ մի նոր բարձունքի է հասել հայ և համաշխարհային լեզվաբանական միտքը»: Բանախոսը ելույթը եզրափակեց Գ. Ջահուկյանի բանաստեղծություններից մեկով:

Միջոցառման երկրորդ հատվածում ներկաներից ոմանք հանդես եկան ելույթներով, շնորհակալական խոսքեր հայտնեցին միջոցառման կազմակերպիչներին և բանախոսին, պատմեցին դրվագներ ու հուշեր Գ. Ջահուկյանի մասին, ևս մեկ անգամ արժևորեցին մեծ գիտնականի վաստակը: ԳԱԱ թղթակից անդամ, բ.գ.դ. Լավրենտի Հովհաննիսյանը նշեց. «Ովքեր ծանոթ են Ջահուկյանին, կփաստեն, որ նա ինչ մասնագիտություն էլ ընտրեր, լինելու էր առաջինն այդ ասպարեզում, երջանիկ ենք, որ առիթ ենք ունեցել մոտիկից ծանոթ լինելու նրան, շփվելու նրա հետ, լսելու նրա խորհուրդները: Նա համաշխարհային մեծ ճանաչում ունեցող գիտնական էր, մեծերի շարքում էր»: ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի դեկան Արծրուն Ավագյանն ընդգծեց, որ համալսարանում ևս վառ է պահվում Գ. Ջահուկյանի հիշատակը, նրա անունով են անվանակոչել լսարաններից մեկը: Ինստիտուտի ընդհանուր և համեմատական լեզվաբանության բաժնի վարիչ Վազգեն Համբարձումյանը հուշեր և կյանքի դրվագներ պատմեց Գ. Ջահուկյանի աշխատանքային առօրյայից: Բ.գ.դ. Ռոբերտ Թոխմախյանը խոսեց Գ. Ջահուկյանի գիտակազմակերպչական գործունեության մասին:

Միջոցառումը եզրափակվեց «Ջահուկյանական ընթերցումներ» մատենաշարի 13-րդ պրակի շնորհանդեսով: «Ջահուկյանական ընթերցումներ» մատենաշարի ստեղծման պատմությունը ներկայացրեց ինստիտուտի գիտական քարտուղար, բ.գ.թ. Անահիտ Աբրահամյանը:

Մերի ՍԱՐԳՍՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու

«ԲԱԼԹԻԿԱՅԻՑ ՄԻՆՉԵՎ ՍԵՎ ԾՈՎ.

➢6 խնդիրներին և հարակից այլ հարցերի:

Լիագումար նիստի սկզբում ներկաները լռությամբ հարգեցին կյանքից անժամանակ հեռացած գիտաժողովի կազմակերպչական կոմիտեի անդամ, Մոսկվայի Մ. Վ. Լոմոնոսովի անվան պետական համալսարանի պատմության ֆակուլտետի դեկան, արվ. դոկտոր, պրոֆեսոր, հայագետների լավ բարեկամ և պայծառ գիտնական Իվան Տուչկովի հիշատակը:

Այնուհետև զեկուցումներով հանդես եկան ճանաչված գիտնականներ Ֆրանսիայից, Լեհաստանից, Ռուսաստանից, Արգենտինայից և Հայաստանից: «Արարատից մինչև Կարպատներ» թեմայով զեկույց կարդաց «Փարիզ 1» համալսարանի պրոֆեսոր, պ. գ. դ. Կլոդ Մութաֆյանը: «Հայերի ծառայության սկիզբը լեհական դիվանագիտության մեջ. Լյաշեկի և Սրոկի ասպետ Գրիգորը» նյութին էր նվիրված Լեհաստանի Յագելոնյան համալսարանի մշակույթի պատմության և պատմական կրթության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Կշիշտոֆ Յան Ստոպկայի ելույթը: ՌԴ մշակույթի նախարարության արվեստագիտության պետական ինստիտուտի գիտակազմակերպչական հարցերի գծով փոխտնօրեն, արվ. գ. դ. Արմեն Ղազարյանի զեկուցման թեման էր «Ղրիմի հայկական եկեղեցիները՝ որպես մշակութային ավանդույթների փոխազդեցության դրսևորում», Տրես դե Ֆեբրերոյի համալսարանի պրոֆեսոր, փիլիսոփայության դոկտոր Նելիդա Ելենա Բուլղուրջյանինը՝ «Հայկական սփյուռքը և «Հայրենիքը». մերձեցումը և տարակարծությունները՝ հաշվի առնելով դինամիկան և բարդ կապերը. հայացք Արգենտինայից», մինչդեռ Ռուս-հայկական (Սլավոնական) համալսարանի քաղաքագիտության բաժնի վարիչ, փիլ. գ. թ. Հովհաննես Սարգսյանը ելույթ է ունեցել «Հայկական Սփյուռքը Հայաստանի Հանրապետության ինքնության քաղաքականության համատեքստում» թեմայով:

Հոկտեմբերի 15-ին և 16-ին գիտաժողովի նիստերի աշխատանքները շարունակվել են ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում՝ հետևյալ խորագրերը կրող թեմատիկ չորս բաժանմունքներում. առաջինը՝ «Հայերը կենտրոնական, հարավային և հարավարևելյան Եվրոպայի երկրներում», երկրորդը՝ «Բելառուսի, Լեհաստանի և Ուկրաինայի հայ համայնքները. պատմություն և արդիականություն», երրորդը՝ «Հայ-ռուսական հարաբերությունները պատմական հեռանկարում և արդի փուլում», չորրորդը՝ «Հայկական մշակույթը, արվեստը, ճարտարապետությունը, քարտեզագրությունը Սև ծովից մինչև Բալթիկ ծով ընկած տարածաշրջանում»:

Հագեցած էր նաև միջազգային գիտաժողովի մասնակիցների համար նախատեսված մշակութային-ճանաչողական ծրագիրը: Այն ներառել է այցելություն Մատենադարանի ցուցասրահ, Գառնիի, Գեղարդի, Զվարթնոցի, Էջմիածնի, Խոր Վիրապի հնավայրեր, Ս. Փարաջանովի տուն-թանգարան, ինչպես նաև հատուկ հայագետների համար հայկական ժողովրդական գործիքների անսամբլի և մենակատարների կողմից ազգային երգարվեստի գոհարների շնորհալի ներկայացում դասական ոճի նորակառույց հաստատություններում:

Նախատեսվում է գիտաժողովում կարդացված զեկուցումները հրատարակել:

Հայագիտական սույն միջազգային գիտաժողովն իր թեմատիկ տարողությամբ և հետազոտողների ընդգրկուն մասնակցությամբ ոչ միայն հանրագումարի բերեց ՀՀ ԳԱԱ 75-ամյա հոբելյանական տարվա միջոցառումների հումանիտար շարքը, այլ նաև նոր հորիզոններ ուրվագծեց Հայաստանի և տարբեր երկրների հայագետների համագործակցության ասպարեզում:

Քնարիկ ԱՎԱԳՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի առաջատար գիտաշխատող

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ա. Մ. Սիրունյանի հիշատակին



Հայաստանի Հանրապետության ազգային ակադեմիայի նախագահությունը, Ֆիզիկայի և աստղաֆիզիկայի բաժանմունքը խորին վշտով հայտնում են, որ 2018 թ. սեպտեմբերին 70 տարեկան հասակում կյանքից հեռացավ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ալբերտ Մկրտիչի Սիրունյանը:

Ալբերտ Սիրունյանը ծնվել է 1948 թվականի հունվարի 13-ին Երևանում:

1965 թվականին ավարտել է Երևանի Մռավյանի անվան ռուսական միջնակարգ դպրոցը ոսկե մեդալով և նույն թվականին ընդունվել Երևանի պետական համալսարանի ֆիզիկայի ֆակուլտետ:

1970 թվականին ավարտել է Երևանի պետական համալսարանը, 1971-ից աշխատում էր Երևանի ֆիզիկայի ինստիտուտում, որտեղ 1999-ից մինչև 2003 թ. աշխատել է որպես փոխտնօրեն: 2003 թվականից Երևանի ֆիզիկայի ինստիտուտի փորձարարական ֆիզիկայի բաժանմունքի վարիչն էր: 2005-ից դասավանդել է Երևանի պետական համալսարանում, 2006-ին ընտրվել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ: 2013-ին Ա. Սիրունյանին շնորհվել է պրոֆեսորի գիտական կոչում: Ա. Մ. Սիրունյանի հետազոտությունների բնագավառը բարձր էներգիաների, տարրական մասնիկների և փորձարարական միջուկային ֆիզիկան էր: Մասնակցել է Միջուկային ֆիզիկայի եվրոպական միացյալ կենտրոնի (CERN) կոլայդերի ստեղծման աշխատանքներին: Կատարել է գիտափորձեր և ստեղծել նոր ուղղություն՝ պրոտոններով բևեռացված թիրախ (սպին) մասնավորապես ֆոտոններով: Մասնակցել է Ժնևում կառուցվող հադրոնային արագացուցչի ծրագրով գիտափորձերին: Լոնդոնի ֆիզիկայի ինստիտուտի պատվավոր անդամ էր:

Ալբերտ Սիրունյանի՝ գիտնականի, մանկավարժի և լավ ընկերոջ հիշատակը միշտ վառ կմնա հարազատների ու նրան ճանաչողների սրտերում:

ՀՀ ԳԱԱ նախագահություն
ՀՀ ԳԱԱ ֆիզիկայի և աստղաֆիզիկայի բաժանմունք

Ակադեմիական նոր հրատարակություններ

1. Ա. Դոլուխանյան - Ֆրանսիացի հայագետներ (XIX-XX դարեր):
2. Հեղ. խումբ - Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրը Հայաստանի Հանրապետությունում. գիտական հոդվածների ժողովածու -2018, մաս II:
3. Հեղ. խումբ - Հովհաննես Այվազովսկու 200-ամյա հոբելյանին նվիրված գիտաժողովի նյութեր:
4. Ս. Նազարեթյան - Սպիտակի 1988թ. երկրաշարժը լուսանկարներով, փաստերով և մեկնաբանություններով:
5. ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ. 75 տարի:
6. «Մերձավոր Արևելք. պատմություն, քաղաքականություն, մշակույթ», հոդվածների ժողովածու, պր. XIII:
7. Գ. Մխիթարյան – Արևելյան Այսրկովկասի վարչաքաղաքական կազմավորումները ԺԸ դարի երկրորդ կեսին:
8. И. Овакимян- Кяндарян-Люди эпохи: Карен Александрович Кяндарян.
9. «Բանբեր հայագիտության», 2018թ. հ.2:
10. А. Исаакян- Сыновья «Вернатуна»:
11. Ա. Աղասյան-Հայ կերպարվեստի և կիրառական արվեստի կորուստներն Օսմանյան կայսրության տարածքում (համիդյան ջարդերից մինչև մեր օրերը):

Շուշիի թեմական հոգևոր դպրոց – 180

Շուշին ժամանակին եղել է հայ հոգևոր արարման կենտրոններից մեկը, որտեղ գործել են բազմաթիվ կրթական ու մշակութային օջախներ: Այս գողտրիկ հայաքաղաքի հարուստ հոգևոր-մշակութային անցյալի մի մասն է կազմում թեմական հոգևոր դպրոցը: Հիմնադրվել է 1838 թ. հունիսի 22-ին Ներսես Աշտարակեցի կաթողիկոսի կողմից ուսման 9 տարվա տևողությամբ:

Դպրոցը ստեղծվել է իբրև նյութապես անապահով մի հաստատություն, ինչպես կրթօջախի սաներից Լեոն է ասել. «Դա աղքատության մեջ ծնված մի փոքրիկ հիմնարկություն էր»:

Տարբեր տարիների այստեղ ուսուցչություն են արել Պետրոս Շանշյանը, Պերճ Պռոշյանը, Խորեն Ստեփանեն, Ղազարոս Աղայանը, Սեդրակ Մանդինյանը, Լևոն Մանվելյանը, Համբարձում Առաքելյանը, Լևոն Սարգսյանը, Արշակ Չիլինգարյանը, Ավետիք Տեր-Պողոսյանը և այլք:

Վարժարանի կյանքում շրջադարձային են եղել 19-րդ դարի 60-ական թվականները. 1860-ին դպրոցը հանձնվում է Շուշիի հասարակության կողմից ընտրված հոգաբարձությանը: Վերջինիս հաջողվում է զգալիորեն բարելավել կրթօջախի նյութական վիճակը: Շուշիի թեմականը մեծ բարեփոխությունների է ենթարկվում, երբ Լուսավորչի գահին Ներսես Աշտարակեցուն հաջորդած Մատթեոս Կոստանդնուպոլսեցին, ընդառաջելով շուշեցիների խնդրանքին, 1863-ին դպրոցի տեսուչ է նշանակում Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի տեսուչ, կրթական գործի նվիրյալ մշակ Պետրոս Շանշյանին. տեսչի օգնական է նշանակվում Պերճ Պռոշյանը, ով ստանձնում է նաև հայոց լեզու, հայ գրականություն և հայոց ազգային պատմություն առարկաների դասավանդումը: Շանշյանի և Պռոշյանի՝ այս երկու անձնվեր գործիչների համատեղ ջանքերով Շուշիի թեմական դպրոցը մեծ ծաղկում է ապրում, դառնում եռադասյա՝ իր երկու ծխական դպրոցներով: Փոխվում է նաև դպրոցի անվանումը՝ «Եղիշյան ազգային հոգևոր դպրոց»՝ Ավարայրի երգիչ Եղիշեի անունով:

Կրթօջախը լայն ճանաչում է ստանում Պետրոս Շանշյանի, Խորեն Ստեփանեի, Վասակ Պապաջանյանի և Ղազարոս Աղայանի տեսչության տարիներին՝ 1877-1882 թթ.:

Դպրոցը պահվել է նվիրատվություններով, եկեղեցական եկամուտներով, աշակերտների ուսման վարձով, այն թեմի միակ ազգային արական միջնակարգ դպրոցն էր, 1917-ից գործել է որպես լրիվ միջնակարգ դպրոց, փակվել է 1920-ին:

Շուշվա թեմական դպրոցը ազգին տվել է կյանքի տարբեր ոլորտների մի շարք երևելի գործիչներ՝ Արամ Մանուկյան, Արշակ Աթայան, Բախշի Իշխանյան, Գարեգին Ա Հովսեփյան, Գրիգոր Ներսիսյան, Լեո, Հակոբ Խանլարյան, Հակոբ Հովհաննիսյան, Մուրացան, Նիկոլ Դուման, Սողոմոն Մելիք-Շահնազարյան, Ստեփան Աղաջանյան, Վաղարշ Վաղարշյան, Վարդան Աբովյան, Տմբլաչի Խաչան (Կոստանդին Մելիք-Շահնազարյան) և այլն:

Նշենք, որ հիշյալ դպրոցից գաղափարական հողի վրա պարբերաբար վտարված աշակերտներից է եղել նաև Հայաստանի Առաջին հանրապետության հիմնադիր Արամ Մանուկյանը:

Շուշիի թեմական դպրոցը եղել է հայ ժողովրդի հասարակական-քաղաքական ու մշակութային կյանքում նշանակալի դեր խաղացած փոքրաթիվ ուսումնական հաստատություններից մեկը: Հասարակական, գաղափարական ու մասնագիտական՝ մանկավարժական խմորումները չեն շրջանցել նաև նշված հաստատությունը:

Շուշվա թեմականն էլ ունեցել է իր լավ ու վատ օրերը, իր ձեռքբերումներն ու ձախողումները: Մյուս հայ դպրոցների նման այս դպրոցին էլ մշտապես ուղեկցել են կարիքը և նյութական միջոցների անբավարարությունը, նրա առաջ ևս ծառացել է լինել-չլինելու խնդիրը:

1903 թ. կառավարության հրամանով փակվում է նաև Շուշվա թեմական դպրոցը: Պատճառն այն էր, որ հայ դպրոցների ու եկեղեցական կալվածքների բռնագրավման ժամանակ շուշեցիները և թեմականի սաները կառավարությանն ու նրա զորքերին ցույց էին տվել եռանդուն դիմադրություն, եղել էր անգամ զինված ընդհարում: Կրթարանը վերաբացվել է 1905 թ. աշնանը:

Դպրոցն իր ուսուցչակազմով և աշակերտությամբ վճռորոշ դեր է խաղացել հայոց եկեղեցապատկան կալվածքները բռնագրավելու 1903-ի ցարական հրամանագրի դեմ ժողովրդական ուժգին ըմբոստացման և տարած հաղթանակի գործում:

Մեծ եղավ նաև Շուշիի թեմական դպրոցի հեղափոխական ուսուցիչների և աշակերտների դերը ցարական իշխանության կողմից հրահրված հայ-թաթարական ընդհարումների ժամանակ հայկական ինքնապաշտպանության կազմակերպման գործում:

1913. մեծ շուքով նշվել է կրթօջախի 75-ամյակը:

Շուշիի թեմական դպրոցի մանրամասն պատմությունը գրել է ականավոր պատմաբան, հրապարակախոս, գրող, գրականագետ, ինչպես վերևում տեսանք, դպրոցի նախկին սան Լեոն՝ «Պատմություն Ղարաբաղի հայոց թեմական հոգևոր դպրոցի: 1838-1913»:

Հրաչյա ԲԱԼՈՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան հայտարարում է մրցույթ «ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտ» և «ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենների թափուր տեղերի համար:

Համաձայն «Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի գիտական կազմակերպություն» պետական ոչ առևտրային կազմակերպության տիպային (օրինակելի) կանոնադրության 21-րդ կետի, կազմակերպության տնօրենի թեկնածություն առաջադրելու իրավունք ունեն կազմակերպության գիտական անձնակազմը, համապատասխան բաժանմունքի բյուրոն և կազմակերպության գիտական գործունեությանը համապատասխանող մասնագիտությամբ ՀՀ ԳԱԱ անդամները, որոնք կարող են առաջադրել միայն մեկ թեկնածու: Տնօրենի թեկնածուն պետք է ունենա գիտական աստիճան, ընտրության պահին լինի 65 տարեկանից ցածր տարիքի, ունենա գիտակազմակերպչական աշխատանքի փորձ, մասնագիտական ուղղվածությամբ պետք է համապատասխանի գիտական կազմակերպության հիմնական գիտական ուղղություններից մեկին:

Առաջադրված թեկնածուները ներկայացնում են հետևյալ փաստաթղթերը՝

1. Դիմում
2. Առաջադրումը հաստատող փաստաթուղթ
3. Լուսանկար
4. Քաղվածք աշխատանքային գրքույկից
5. Ինքնակենսագրություն
6. Բարձրագույն կրթության դիպլոմի պատճեն
7. Գիտական աստիճանը հաստատող դիպլոմի (դիպլոմների) պատճեն
8. Գիտական կոչումը հավաստող փաստաթուղթ (դրա առկայության դեպքում)
9. Հրատարակված աշխատությունների և հոդվածների ցանկ
10. Կադրերի հաշվառման անձնական թերթիկ
11. Տեղեկանք մշտական բնակության վայրից
12. Բնութագիր վերջին աշխատավայրից (եթե կազմակերպությունը չի լուծարվել)
13. Կազմակերպության զարգացման ծրագիր
14. Անձնագրի և սոց. քարտի պատճենները:

Թեկնածուների հիմնավորված առաջադրումները վերոնշյալ փաստաթղթերի հետ մեկ ամսվա ընթացքում (հայտարարության հրապարակման օրվանից) խնդրվում է ներկայացնել ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունք հետևյալ հասցեով՝ 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող., 24, հեռ. 52-13-62:

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա

Գիտություն
Գլխավոր խմբագիր՝ Ա. ՏԵՐ-ԳԱԲՐԻԵԼՅԱՆ
Երևան-19, Մարշալ Բաղրամյան 24բ,
հեռ. 56-80-14, 077 31 63 76
Դասիչ՝ 69268, գրանցման վկայական՝ 448:
Ստորագրված է տպագրության՝ 23.11.2018 թ.:
"ГИТУТЮН" ("Наука") газета НАН РА